սը պատկանում է 12-րդ դարի վերջերքին և 13-րդ դարին։ 10 և 11-րդ դարերի արձանագրությունների թիվը 6 է, 12—13-րդ դարինը՝ 126, իսկ 14—19-րդ դարերինը, միասին վերցրած, ընդամենը՝ 62։

Այս երևույթն աչքի է ընկնում նաև Սանահնից դուրս, Հայաստանի բոլոր այլ հնավայրերում։ Կոստանյանցի «Վիմական տարեգրի» մեջ հավաքած թվական ունեցող արձանագրությունների բացարձակ մեծամասնությունը դարձյալ պատկանում է 12-րդ դարի երկրորդ կեսին և 13-րդ դարին։

Սակայն, այստեղ աչքի է ընկնում մի հետաքրքիր հանգամանք, դա այն է, որ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության հետ միասին զանազան դարերում փոխվել է նաև վիմական արձանագրությունների բնույթն ու բովանդակությունը։

Մարզպանական շրջանից մեզ հասած վիմական արձանագրությունները թվով քիչ են, բայց բոլորն էլ շինարարական բնույթի են։ «Վիմական տարեգրի» մեջ մինչև 8-րդ դարը կան ընդամենը 9 արձանագրություն, դրանցից մեկը պատկանում է 13-րդ դարին և սխալ ընթերցումով ստացել է հայոց Ձե (85+551=636) թվականը։ Դրա վրա պետք է ավելացնել հարյուրավորի Ո կամ Ջ գրերը, որ կորած է։ Մնացած ութ արձանագրությունները, որ անկասկած 6 և 7-րդ դարերին են պատկանում, բոլորն էլ վերոհիշյալ բնույթի են։

8-րդ դարում, երբ Հայաստանում արաբներն էին իշխում, ոչինչ չի կառուցվել։ Այդ դարին պատկանող ընդամենը երեք արձանագրություններից միայն մեկն է շինարարական բնույթի, այն էլ վերաբերում է Թալինում աղբյուր շինելուն։ Մնացած երկուսը տապանագրեր են։

9-րդ դարի առաջին կեսից «Վիմական տարեգրի» մեջ ոչ մի արձանագրություն չկա, որովհետև այդ ժամանակը հայերի ապըստամբությունների և արաբների դաժան ճընշման տարիներն էին, իսկ երբ 862 թվականին Հայաստանը քիչ թե շատ ինքնուրույն դարձավ, և Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան ճանաչվեց, Հայաստանում սկսվեց շինարարական նոր դարաշրջան գլխավորապես Բագրատունյաց, Արծրունյաց և Սյունյաց նախարարությունների սահմաններում, որ տևեց մինչև սելջուկյան ավերիչ արշավանքները 11-րդ դարի կեսերին։

Այս խոշոր վերելքի ժամանակաշրջանում շինվում են քաղաքներ, կամուրջներ, իջևանատներ, բերդեր և բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, որոնց թվում նաև Սանահինն ու Հաղբատը։

Այդ մասին բազմաթիվ կարևոր տեղեկություններ են հաղորդում վիմական արձանագրությունները և մեր հին մատենագիրները։ Այդ միջոցին շինարարության գլուխ կանգնած են եղել հայոց թագավորներն ու նրանց վասալ իշխանները։ Վանքերը, տընտեսական կայուն հիմքերի վրա դնելու նպատակով, նրանք մշտական եկամուտի աղբյուրներ են հատկացրել նրանց, նվիրաբերելով տուրքերից ազատ կալվածքներ, խանութներ, ջրաղացներ, ձիթհանքեր և այլ անշարժ գույք։

Շինարարական և տնտեսական խոշոր վերելք ապրեց Հայաստանը նաև 12-րդ դարի վերջերքին և 13-ի առաջին քառորդին, երբ Հայաստանի մի զգալի մասն անցավ Հայազգի Զաքարյան իշխաններին։

Սակայն այդ բոլորին վերջակետ դրվեց Ջալալեդդինի (1225) և մանավանդ մոնղոլ թուրքերի արշավանքներով, երբ ժողովրդի մեջ առաջ եկավ հուսալքում։ Հսկայական չափերի հասավ երկրից դուրս գաղթելու ազգակործան երևույթը։ Գաղթում էին և՛ իշխանները և՛ քաղաքացիները և՛ հողի հետ կապված գյուղացիները։ Մարդիկ իրենց միակ փրկությունը կապում էին եկեղեցու և հանդերձյալ կյանքի հետ, այդ պատճառով իրենց գույքը, այգիները, հողը, ամեն ինչը նվիրաբերում էին վանքերին ու եկեղեցիներին՝ իրենց հոգու փրկության համար։

Այս շրջանի վիմական արձանագրությունների մեծագույն մասի բովանդակությունը նվիրատվական է։ Դրանք փաստորեն պայմանագրեր են վանքի միաբանության և նվիրատուի միջև կնքված՝ այն մասին, որ տրված նվերների դիմաց վանքի միաբանությունը յուրաքանչյուր տարի նշված օրերին պետք է ժամ կամ պատարագ մատուցի նվիրատուի արևշատության համար կամ հիշատակին։

Այս շրջանում մեծ տոկոս են կազմում խաչքարերի և դերեզմանաքարերի վրա եղած արձանագրությունները։ Խաչքարերն էլ մեծ մասամբ կամ դերեզմանաքարերի գլխին են